

պատերազմը, որպեսզի նոցայ տկարութենէն օգուտ քաղեն:  
Պատերազմը սկսաւ, եւ դասալիք զօրական վատաբար հիւանդ  
ծեւացայ, որ այդ դժբախտ գործողութեան մէջ ձեռք չունենամ. եւ երբ  
այդ սոսկալի վերջն ունեցաւ պատերազմը, իմացայ, որ իմ նշանածս  
գազանի մը հետ պիտի ամուսնացնեն եղբայրները, եւ երբ նա  
դիմադրեց կուսանաց վանքի որոշումն տուեր էին, դիմեցի Սիւնեաց  
մետրապօլիտին, դիմեցի դարձեալ կաթողիկոսին, զիս գնացուցին:  
Նոքա էլ հանդարտ, ծանր, կամաց խօսեցան հետս, զիս  
խոհեմութեան եւ համբերութեան, եւ աստուածային կամաց  
հնազանդութեան յորդորեցին, երիտասարդութեան եռանդ է, ըսին,  
սատանայի գրգիռ սրտիս մէջ նշմարեցին, աղօթք ընել եւ բժշկութիւն  
ինձ խոստացան իբրեւ թէ իմ Չարուհուոյ համար զգացած սերս  
դիւահարութիւն էր, եւ այն միջոցին յանկարծ իմացայ նոյն  
կաթողիկոսին շրջակայից թէ իր հրամանով Օրիորդը հեռաւոր վանք  
մը յունաց սահմանագլուխը յուղարկեր էին: Եւ հիմա դու, իշխանուհի,  
իւր բանտապետը, ինձ կ'ըսես թէ նա լաւ է, հանգիստ եւ գոհ է, այո՛,  
այս բարձրաբերձ պարիսպներուն, այս երկաթապատ դռներուն, այս  
զինեալ պահապանաց եւ սպասաւորոց մէջ անշուշտ կամաւ ցոյց  
տալու համար զիս բերել տուիր. նա էլ՝ ինչպէս դիակը գերեզմանին  
մէջ լաւ է, հանգիստ է եւ գոհ է. եւ այդ խեղճ աղջկան, որ կենդանի  
մեռել կ'ընեն, քեզ պէս գեղեցիկ եւ քարասիրտ կափարիչ մը պակաս  
էր:

— Քու այս խօսքերդ թեպէտ ուշ, բայց դարձեալ ժամանակին են, հոգ  
չէ թէ ես բանտապետ կամ գերեզմանի կափարիչ լինիմ, խնդիրը Յոն  
է թէ դու ի՞նչ պիտի ընես, ի՞նչ է քու միտքդ:

— Իմ միտքս, ազատել Չարուհին կամ մեռնիլ:

— Ամէն կը մեռնիմ ըսողները չեն մեռած, Աշոտ իշխան, ես շատեր կը  
ճանչեմ, որ կ'արէր են թէ մահը վերահաս է եւ դեռ երկար տարիներ  
կապրին, նոցայ սիրտը նաեւ որ մեռած կը կարծուիր յանկարծ  
երբեմն մոնչիւններ կ'ուտայ, ես իմ պաշտօնիս պատճառով շատերուն  
խոստովանանքը լսած եմ, եւ աշխարհքս իւր թշուառութեամբ կը